ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/50980-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-313-09.10.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1633 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-313-09.10.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ հարկ է համարում տեղեկացնել, որ ներկայումս քննարկվում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրությունների անցկացման համար «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով նախատեսված համամասնական ընտրակարգով անցկացնելու հնարավորության տարբերակը: Դրանով արմատապես փոխվում են տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման և գործունեության կազմակերպման սկզբունքները:

Նկատի ունենալով շարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ձեռնպահ մնալ ներկայացված օրենքի նախագծի հետագա քննարկումից և հարցին անդրադառնալ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները համամասնական ընտրակարգով անցկացնելու վերաբերյալ քննարկումների շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 նոյեմբերի 2019 թվականի N 1633 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (*Պ-313-09.10.2019-ՏՏԳԲ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 7

Երևան

Պ-313-09.10.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 32-րդ հոդվածի 9-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«9. Համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում՝ համայնքի ղեկավարը (եթե պաշտոնավարել է առնվազն մեկ տարի) դնում է հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Եթե համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ նման որոշում չի ընդունում կամ չի լրացել համայնքի ղեկավարի պաշտոնավարման մեկ տարին, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:»

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

« 8. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման վերաբերյալ ավագանին ընդունում է համապատասխան որոշում: Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը չհաստատվելու դեպքում համայնքի ղեկավարը (եթե պաշտոնավարել է քննարկվող հաշվետվության համապատասխան բյուջետային տարվա սկզբից) դնում է հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Այդ դեպքում գործում է սույն օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված՝ համայնքի ղեկավարի կողմից հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցի վերաբերյալ ընթացակարգը: Եթե համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ նման որոշում չի ընդունում կամ համայնքի ղեկավարը չի պաշտոնավարել քննարկվող հաշվետվության համապատասխան բյուջետային տարվա սկզբից, ապա համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված:

Եթե համայնքի ավագանին այնուամենայնիվ իր որոշմամբ համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունում է հրաժարականը, ապա համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը նույնպես համարվում է հաստատված:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը լրացնել նոր 8-րդ կետով.

«8) «Հայաստանի հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ մասով կամ 35-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքերում: »:

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

« 3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքերում, բացառությամբ 7-րդ եւ 8-րդ կետերի, համայնքի ավագանին կազմում է համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին արձանագրություն, 7-րդ կետով սահմանված դեպքում՝ նիստին ներկա ավագանու անդամների ձայների երկու երրորդով, իսկ 8-րդ կետով սահմանված դեպքում՝ ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունում է համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշում կամ կազմում է արձանագրություն, որը հաստատվում է ավագանու ներկա անդամների՝ համապատասխանաբար երկու երրորդով կամ կեսից ավելիով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի» մասին օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ մասի եւ 35-րդ հոդվածի 8-րդ մասի առաջին պարբերություններով սահմանվող իրավակարգավորումների մեջ առկա է փոխկապակցվածություն: Այսպես, համաձայն 35-րդ հոդվածի 8-րդ մասի՝ համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը չհաստատվելու դեպքում համայնքի ղեկավարը դնում է հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը եւ այդ դեպքում պետք է գործի նույն օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված՝ համայնքի ղեկավարի կողմից հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցի վերաբերյալ ընթացակարգը: Սակայն, 32-րդ հոդվածի 9-րդ մասում նկարագրված ընթացակարգում կիրառվում է «համայնքի ղեկավարը կարող է դնել հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը» եզրույթը, ինչը կարող է հանդիսանալ տարատեսակ մեկնաբանությունների առիթ:

Առաջարկվող լուծումները

Նախագծով առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի» մասին օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ մասի եւ 35-րդ հոդվածի 8-րդ մասի առաջին պարբերություններում կիրառել «դնում է հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը» եզրույթը, ինչպես նաեւ հրաժարականն ընդունելու համար ավագանու անդամների՝ անհրաժեշտ ձայների շեմը երկու երրորդից իջեցնել մինչեւ պարզ մեծամասնություն: Նախագծով առաջարկվում է, որ համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը կարող է քննարկվել, եթե նա պաշտոնավարել է բյուջեի կատարողականը չընդունվելու դեպքում՝ համապատասխան բյուջետային տարվա սկզբից, իսկ բյուջեի նախագիծը չընդունվելու դեպքում՝ առնվազն մեկ տարի:

Քանի որ ավագանու կողմից հրաժարականն ընդունելու փաստով պետք է նախաձեռնվի համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու գործընթաց՝ նախագծային փաթեթում ներառվել է նաեւ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով սահմանվում է, որ համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են նաեւ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի» մասին օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ մասի եւ 35-րդ հոդվածի 8-րդ մասի առաջին պարբերություններով սահմանվող դեպքերում:

Ակնկալվող արդյունքը

Օրենքի ընդունմամբ կվերացվի «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի» մասին օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ մասի եւ 35-րդ հոդվածի 8-րդ մասի առաջին պարբերություններում առկա հակասությունը, ինչպես նաեւ «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենքի 26-րդ հոդվածում կապահովվի «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի» մասին օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ մասի եւ 35-րդ հոդվածի 8-րդ մասի առաջին պարբերություններում առկա գործընթացների իրավական հետեւանքը, այն է՝

համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, քանի որ մինչ այժմ վերոնշյալ գործընթացների դեպքում նկարագրված չէր, թե ինչ իրավական հետեւանք է այն ունենալու: